Health Services
LOS ANGELES COUNTY

my health la

# Medi-Cal-ի Ամբողջական Փաթեթ 50+ Տարիքի Անձանց Համար

**Կալիֆորնիայի նոր օրենքը թույլ է տալիս 50 տարեկան և ավելի բարձր տարիքի Կալիֆորնիայի բոլոր իրավասու բնակիչներին անվճար ստանալ** *Medi-Cal*-**ի Ամբողջական Փաթեթը՝ անկախ ներգաղթային կարգավիճակից:**

## Գրանցվե՛ք հիմա:

**Արդյո՞ք Կալիֆորնիայի կառավարությունը տրամադրում է Medi-Cal:**

*Այո: Medi-Cal-ը Նահանգային բժշկական ապահովագրություն է ցածր եկամուտ ունեցող մարդկանց համար:*

**Արդյո՞ք Medi-Cal-ը կվնասի իմ ներգաղթային կարգավիճակին:**

*Ոչ: Medi-Cal-ի «ամբողջական փաթեթը» ստանալը և դրանից օգտվելը (բացառությամբ ծերանոցների կամ հոգեկան առողջության խնամքի կենտրոնների) չի վնասի անձի ներգաղթային կարգավիճակին: Ներգաղթի կարգավիճակի հետ կապված հարցերի դեպքում դիմեք Լոս Անջելեսի Շրջանի Ներգաղթյալների Հարցերով Զբաղվող Գրասենյակ՝ զանգահարելով 1-800-593-8222 հեռախոսահամարով կամ այցելելով oia.lacounty.gov կայքէջ:*

**Ի՞նչ կարող եմ ստանալ Medi-Cal-ի ամբողջական փաթեթի միջոցով:**

*Medi-Cal-ի «ամբողջական փաթեթը»-ը բժշկական ապահովագրություն է, որն ընդգրկում է՝*

*Այցելություններ բժշկին*
*Ատամնաբուժական ծառայություններ*
*Տեսողության (աչքի) բուժում*
*Մասնագետների մոտ այցերի կազմակերպում*
*Հոգեկան առողջության բուժում*
*Թմրանյութերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարումների հետ կապված ծառայություններ*
*Դեղատոմսերի և բժշկական պարագաների տրամադրում*
*Տնային խնամք*
*Փոխադրում բժշկական ժամադրությունների վայրեր*
*Եվ շատ ավելին*

**Արդյո՞ք ես պետք է որևէ վճարում կատարեմ:**

*Շատ անձանց և ընտանիքների համար վճարումներ չկան:*

**Ինչպե՞ս կարող եմ դիմել Medi-Cal-ի համար:**

**Զանգահարեք ձեր տնային բուժօգնության կլինիկա:**

- Ձեր տնային բուժօգնության կլինիկան կարող է օգնել ձեզ դիմել Medi-Cal-ի փաթեթի համար: Գտեք ձեր MHLA-ի տնային կլինիկան հետևյալ հասցեով՝ dhs.lacounty.gov/our-locations:

**Կարող եք զանգահարել նաև՝**

- Առողջապահական Հարցերով Զբաղվող Համայնքային Աջակցության Նախաձեռնություն՝ (213) 749-4261 հեռախոսահամարով:
- BAILA-ի Ցանց՝ (888) 624-4752 հեռախոսահամարով կամ BAILAnetwork.org կայքով:
- Լոս Անջելեսի Շրջանի DPSS՝ (866) 613-3777 հեռախոսահամարով կամ Benefitscal.com կայքով:

**Խնդրում ենք չհապաղել: Դիմեք Medi-Cal-ի համար այսօր:**